

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

1. Յուրաքանչյուր պետության գոյության երաշխիքը

- ա. զինված ուժերի առկայությունն է
- բ. բանակի առկայությունն է
- գ. զորքի առկայությունն է
- դ. իշխանության առկայությունն է

2. Նշվածներից ո՞րն է ՀՀ պետական խորհրդանիշ

- ա. ազգային ժողովը
- բ. ՀՀ զինված ուժերի զինանշանը
- գ. ՀՀ կառավարությունը
- դ. ՀՀ պետական օրհներգը

3. Հին դարերում բանակի կազմակերպման կարևորագույն սկզբունքն էր՝

- ա. միանձնյա կառավարումը
- բ. կոլեգիալ ղեկավարումը
- գ. միանձնյա ղեկավարումը
- դ. կոլեգիալ կառավարումը

4. Մարտի դաշտում որտե՞ղ պետք է գտնվի զորամասի մարտական դրոշը

- ա. մարտի դաշտում
- բ. ռազմական գործողությունների շրջանում
- գ. բարձունքում
- դ. թիկունքում

5. Ե՞րբ է հաստատվել Հայաստանի 3-րդ Հանրապետության զինանշանը

- ա. 1992թ. սեպտեմբերի 21
- բ. 1992թ. օգոստոսի 23
- գ. 1991թ. օգոստոսի 23
- դ. 1991թ. դեկտեմբերի 27

6. Ե՞րբ է Հայկական բանակի ծննդյան օրը.

- ա. 1992թ. մայիսի 9
- բ. 1992թ. հունվարի 28
- գ. 1920թ. փետրվարի 23
- դ. 1993թ. սեպտեմբերի 11

7. Քանի՞ ջոկն է համարվում մեկ դասակ.

- ա. 4
- բ. 3
- գ. 2
- դ. 5

8. Ո՞րն է հայկական բանակում ամենաբարձր զինվորական կոչումը

- ա. կապիտանը
- բ. ՀՀ Վարչապետը
- գ. բանակի գեներալը
- դ. Ազգային հերոսը

9. Շարքի բաղկացուցիչ մասերն են

- ա. ճակատ, թիկունք, խորություն, բարձրություն
- բ. ճակատ, թիկունք, լայնություն, խորություն
- գ. ճակատ, թիկունք, ոտնաչափ, բռունցք
- դ. աջ թև, ձախ թև, թիկունք, բարձրություն

10. Ժամանակի առկայության դեպքում ծնկած դիրքից կրակելու համար անհատական խրամատը խորացնում են մինչև

- ա. 60 սմ
- բ. 70 սմ
- գ. 50 սմ
- դ. 65 սմ

11. 1918թ. օգոստոսին Հայաստանի Առաջին Հանրապետության պառլամենտը ընդունեց սահմանադրության նախագծում առաջարկված եռագույնը՝ կարմիր, կապույտ և նարնջագույն տարբերակով՝

- ա. Ստեփանոս Մալխասյանցի հիմնավորմամբ
- բ. Մանուկ Աբեղյանի հիմնավորմամբ
- գ. Բարսեղ Կանաչյանի հիմնավորմամբ
- դ. Միքայել Նալբանդյանի հիմնավորմամբ

12. ՀՀ խորհրդանիշ եռագույն դրոշը՝ կարմիր, կապույտ և նարնջագույն տարբերակով, առաջին անգամ առաջարկվել է՝

- ա. Շահամիր Շահամիրյանի սահմանադրության նախագծում:
- բ. Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ,որ կոչի հորդորակ»- ում:
- գ. Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստնություն» աշխատությունում :
- դ. Մխիթար Գոշի «Դատաստանագրք»-ում:

13. Նշվածներից, որը ՀՀ զինված ուժերի խնդիր չէ.

- ա. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովումը:
- բ. տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության պահպանումը:
- գ. հնարավոր զինված հարձակմանը հակահարված տալը:
- դ. ներքին կարգու կանոնի ապահովումը:

14. Զինվորական ողջույնը

- ա. Զինվորական ողջույնը զինվորական ծառայության մեջ ընկերական համախմբվածության, բարեկրթության, փոխադարձ հարգանքի անբաժանելի կանոններից մեկն է:
- բ. Զինվորական ողջույնը զինվորական ծառայության մեջ ընկերական համախմբվածության և փոխադարձ հարգանքի անբաժանելի կանոններից մեկն է:
- գ. Զինվորական ողջույնը զինվորական ծառայության մեջ ընկերական համախմբվածության, բարեկրթություն և նվիրվածության անբաժանելի կանոններից մեկն է:
- դ. Զինվորական ողջույնը զինվորական ծառայության մեջ ընկերական համախմբվածության, բարեկրթություն, նվիրվածության և փոխադարձ հարգանքի անբաժանելի կանոններից մեկն է:

15. Ձուկը քանի մետր ճակատով է հարձակվում

- ա. 50 մ.
- բ. 100 մ.
- գ. 150 մ.
- դ. 25 մ.

16. Հարձակման տեսակ չէ

- ա. գրոհը,
- բ. հանդիպական մարտը,
- գ. հետապնդումը,
- դ. պաշտպանությունը

17. ՀՀ ՁՈՒ- ամենօրյա կենսագործունեությունը ապահովելու համար քանի՞ կանոնագիրք է գործում

- ա. 4
- բ. 6
- գ. 8
- դ. 5

18. ՀՀ զինված ուժերը կազմված են՝

- ա. Զինվորական կառավարման կենտրոնական մարմնից, զորամիավորումներից, զորատեսակներից և զորամասերից:
- բ. Չորամիավորումներից:
- գ. Չորամիավորումներից և զորատեսակներից:
- դ. Բանակից և զորամիավորումներից:

19. Դիտարկման հարմարավետության համար տեղանքի տվյալ հատվածը բաժանվում է գոտիների՝

- ա. Մոտ և հեռու:
- բ. Բարձր, միջին ցածր:
- գ. Առջևի և ետևի:
- դ. Մոտակա, միջին, հեռավոր:

20. ԿԱ-74 ինքնաձիգի գնդակի թռիչքի առավելագույն հեռավորությունը՝

- ա. 3250 մ.
- բ. 3000 մ.
- գ. 3150 մ.
- դ. 2150 մ.